



ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐԶՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 5/ շեռ. 077778199 էլ. Փոստ info_yeghegnadzor@aarhus.am.
hrachqocharyan@mail.ru

01/15

ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության
Եղեգնաձորի ոստիկանության բաժին
Բաժնի պետ Գևորգ Գրիգորյանին
Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող
Հրաչ Քոչարյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Գրիգորյան

2015 թվականի հոկտեմբերի 19-ին համացանցում <<ԷկոԼուր>> -ը բնապահպանական կայքը տեղեկատվություն է տարածել, որ հոկտեմբերի 17-ին ՀՀ Վայոց ձոր մարզի Հերմոն համայնքի վարչական տարածքում, Եղեգիս գետի հարևանությամբ, ԷկոԼուրի ֆոտոխցիկը ֆիքսել է հարյուրավոր հատված ծառերի կոճղեր (http://www.ecolor.org/hy/news/forest/mass-tree-felling-near-yeghegis-river-photos/7737/):

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրի և <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանը խնդրում եմ Ձեզ, Եղեգնաձորի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական, մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Արդյոք օրինական, թե անօրինական են կատարվել ծառերի հատումը
2. Ում է պատկանում ծառահատումների տարածքը
3. Ինչ ծառեր են հատվել
4. Արդյոք հատված ծառերի տարածքը գտնվում է Եղեգիս գետի պաշտպանիչ գոտում, թե ոչ:

Տեղեկատվությունը տրամադրելու մերժելու դեպքում, խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին:

Կանխավ շնորհակալություն.

Հարգանքով Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող

Հ. Քոչարյան
20.10.2015թ.